

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Դեկտեմբեր 24, 1995.

Քրիստոնեայ աշխարհի մեծ մասը կը պատրաստուէր Քրիստոսի Յնունդը դիմաւորելու, մինչ ժառանգաւորաց վարժարանի մեր սաները ամիսներ պատրաստուել յետոյ գեղեցիկ անակընկալ մը ունէին այդ օրը մատուցելու թէ սաղիմահայութեան եւ թէ օտար հիւրերու:

Այդ անակընկալը անշուշտ, մեր սաներուն մէկ ու կէս տարուայ աշխատանքին արդիւնքն էր որ պիտի ցուցադրուէր ի տես մեր գաղութին եւ օտարներուն:

Ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ Կիրակի առաօտ, ժամը 11ին, ձեռամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, ի ներկայութեան Սրբոց Յակոբեանց միաբանութեան եւ մեր ժողովուրդին:

Ամենէն հետաքրքիրը սակայն, մեր սաներու զգեստն էր որ կը նոյնացնէր օրուան ցուցահանդէսը: Անոնք զգեստաւորուած էին Քատերական հագուստներով որոնց գոյներու հարստութիւնը պատկառանք կ'ազդէր այցելողին:

Բացառիկ ցուցահանդէս... այդպէս գնահատեցին կարգ մը այցելուներ, եւ այդ չափազանցութիւն չէր:

Ձեռային աշխատանքի գեղեցիկ կտորներ, խաչասեղներու զանազան տեսակներ, նոր տարուան համար պատրաստուած՝ հրեշտակներու, զանգակներու եւ կաղանդ պապուկներու նկարներով ձեռագործներ:

Մասնաւորապէս աչի կը զարնէր մաքուր աշխատանքը. եւ մանաւանդ տիկիներն հիացումով կը դարձնէին ձեռագործին հակառակ կողմը իրարու ցոյց տալով տարուած բացառիկ հոգատարութիւնը:

Ձեռագործային աշխատանքի հանդէպ մասնաւոր այդ նախանձախնդրութիւնը կը պարտինք նախ հոգեշնորհ Տ. Ընծանուէր արեղային որուն արուեստագէտի ձիրքէն օգտուելով զինքը նշանակեցինք պատասխանատու այդ աշխատանքին իրեն օգնականներ ունենալով տրց. Աթանասն ու տրց. Արիստակէսը:

Պէտք է ըսել որ ցուցահանդէսի բացման առաջին ժամէն իսկ ձեռագործներու վաթսուն տոկոսը վաճառուած էր արդէն:

Սակայն առանձնակի յիշողութեան արժանի է Քաշեայ կտորի վրայ պատրաստուած սկիւի ծածկոցը, չորս անկիւնները հրեշտակներով, պատրաստուած տրց. Աթանասի կողմէ, մեր ժառանգաւորներէն վաղամեծ Արշակի անմեծ յիշատակին:

Ձեռագործներու կողմէն ցուցադրուած էին նաեւ Հայր Ընծանուէրի իւղանկարները, որոնք պատրաստուած էր իր ուսանողութեան շրջանին:

ԱՄԱՆՈՐԸ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

1996 Յունուար 13, Շաբաթ գիշեր ժամը 7:30ին, ընտանեկան ջերմ մթնոլորտի տակ տօնուեցաւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Ամանորը:

Նորոգուելու խանդով խանդավառ՝ ժառ. վարժարանի սաները պատրաստուած էին կոկիկ յայտագիր մը:

Սրահը զարդարուած էր շողուն զարդարանքներով եւ անդին կաղանդի ծառը, որուն ներքեւ մսուրին մէջ կը ննջէր մանուկ Յիսուսը, ուրախութեան տարբեր զգացումներ կ'առօքէր ներկաներուն հոգիներուն մէջ:

Ներկայ էին Սրբոց Յակոբեանց միաբանութեան գրեթէ բոլոր անդամները: Ուսուցիչներ, Պատրիարքարանի պաշտօնէութիւն եւ ուսանողութիւն ի մի համախմբուած անհամբեր կը սպասէին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան գալուստին: Պատրիարք Հօր ժամանումէն եւ սաներու «Սիրտ ի սիրտ» քայլերգին երգեցողութենէն ետք սկսաւ ամանորի յայտագիրը:

Տեսուչ հայր սուրբի բացման խօսքէն ետք, սաները ներկայացուցին «Մկներու ժողովը» կատակերգութիւնը: Թատերական ներկայացումէն ետք, դերասաններ վար իջան բեմէն ու իրենք վարեցին յայտագիրը որ ուրիշ բան չէր եթէ ոչ իրենց զուարճալի ներկայացման շարունակութիւնը:

Յայտագիրը իրօք փորձ մըն էր դուրս ելլելու միօրինակ առօրեայէն ու տրուելու ուրախութեան անհոգ թեւերուն: Նրաժշտութիւն, քախտախաղ ու գուարքաքանութիւն, ասոնք էին որ կը կազմէին յայտագրին կորիզը, որոնք անտարակոյս ներկաները լեցուցին ամանորի խանդավառ յայտերով:

Յայտագրի աւարտին, Պատրիարք Սրբազան Հայրը իր փակման խօսքը ըրաւ, ուրտեղ շնչոյն կեանքի մէջ վերանորոգման կարեւոր գաղափարը: «Հայր Մեր»ի երգեցողութեամբ աւարտեցաւ երեկոյթը:

Սաղիմահայ եին սովորութեան համաձայն, կէս գիշերին, ամբողջ քաղաքի զանգակներուն հետ, Սուրբ Յակոբայ մեծ եւ փոքր զանգակները եւս սկսան ղողանջել, մինչ սաներ եւ ժողովուրդ վանքին մեծ բակը հաւաքուած կ'երգէին «Փառք ի քարոնմս» օրհներգութիւնը:

Միաքանութեան հոգեւորական անդամները, ժառ. վարժարանի Ամանորի երեկոյթէն յետոյ Պատրիարքադ հաւաքուեցան եւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ միասին ընթրիք ունեցան:

Բագրատ Արդ.

ՆԱԽԱԳԱՀ ԼԵՒՈՒ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀՆԴԱԿԱԶԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետութեան վսեմաշուք նախագահ, Տիար Լեւոն Տէր Պետրոսեան, պատկառելի շքախումբով եռօրեայ պաշտօնական այցելութիւն մը տուաւ Հնդկաստան:

Նախագահը իր շքախումբով Նիւ Տեյքսի ժամանեց Զորեքշարքի 13 Դեկտեմբերին, ու յաջորդ օրը սկսաւ իր պաշտօնական այցելութիւններուն, ու հանդիպում ունեցաւ Հնդկաստանի նախագահին, վարչապետին և այլ պաշտօնական անձանց հետ, ստորագրելով կարեւոր համաձայնութիւններ երկու պետութիւններուն միջեւ:

Նախագահ Տէր Պետրոսեան չմոռցաւ հնդկահայ գաղութը ու կալվաթա ժամանեց Շարք 16 Դեկտեմբերին, ուր դիմաւորուեցաւ պետական, զինուորական ու դիւանագիտական անձնաւորութեանց կողմէ: Օդակայան ներկայ էին Հնդկաստանի և Մայրաքոյն Արեւելքի Հայոց Հայրապետական Պատուիրակ, Գերշ. Տ. Աղան Ս. Արք. Պալիօզեան, Արթ. Տ. Սահակ Քահանայ Սահակեան, եկեղեցւոյ վարչականներ Տիարք Ծօրտըն և Մանուկ: Սրբազան Հայրը Սիտիէն յատկապէս կալվաթա ժամանած էր, նախագահը անձամբ դիմաւորելու համար:

Նախագահը օդանաւէն վար գալով ողջունեց բոլոր պաշտօնական անձանց, և ի գարմանս ներկաներուն ողջագուրեց Աղան Սրբազան Հօր:

Փոքր դադարէ ետք նախագահը այցելեց Հայոց Մարդասիրական Ծեմարանը, ուր ուսանողութիւն և գաղութի ներկայացուցիչներ որոտընդոտ ծափերով դիմաւորեցին նախագահը: Քայլերգներու երգեցողութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ապա գործադրուեցաւ զեղարուեստական կոկիկ յայտագիր մը: Սրբազան Հօր ու նախագահի խօսքերէն ետք, տեղի ունեցաւ նուէրներու փոխանակութիւն:

Նախագահը ներկաներուն մօտենալով առանձինն առանձինն բարեւեց ու ապա խմբային նկար առնուեցաւ:

Տեղին է նշել որ Պանկլատեչէն, Պանկթոքէն ու Հոնկթոնկէն հայեր եկած էին ներկայ ըլլալու յիշեալ պատմական այցելութեան:

Դպրոցէն ետք շքախումբը առաջնորդուեցաւ Հայոց Նազարեթայ Եկեղեցին, ուր երախտաւորներու համար հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ: Նախագահը չկարողացաւ իր յուզումը զսպել երբ հայոց ազատագրական շարժումի դեկավար Յովսէփ Էմինի տապանաքարը տեսաւ:

Նոյն երեկոյեան West Bengal-ի կառավարիչը ընդունելութիւն մը տուաւ ի պատիւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին: Ներկայ էին West Bengal-ի գլխաւոր նախարարը և այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ Աղան Սրբազան Հայրը և եկեղեցւոյ առեւտրապետ Տիար Հայկ Սուքիասը:

Յաջորդ օրը ժամը 10-ին նախագահը հրաժեշտ առնելով պետական, զինուորական ու դիւանագիտական անձնաւորութիւններէ ինչպէս նաեւ Աղան Սրբազան Հօրմէն ու Տիար Սուքիասէն, Հայաստան վերադարձաւ:

ԴԻՒԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ
18 Դեկտ. 1995